

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թվականի մայիսի 16-ին տեղի ունեցած ընդհանուր, համադպրոցական ծնողական ժողովին ներկա էին ծնողները, դասղեկները, տնօրեն Ն. Բաբայանը:

#### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:
2. Տարեվերջյան էքսկուրսիաներ կազմակերպելու հարցը:
3. Գալիք ուսումնական տարվան պատրաստավելու, աշակերտական համագգեստի, կոշիկների, անհրաժեշտ նմուշներ ձեռք բերելու հարցը:
4. « Վերջին գանգ»-ի կազմակերպման հարցը:

1. Լսեցին. -ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցին և աշխատակարգին, սովորողների փոխադրման, ավարտման , ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգին ծանոթանալու հարցը:

Տնօրեն Ն. Բաբայանը խոսեց տարեվերջյան անելիքների և դրանց կարևորության մասին՝ որպես տարվա ընթացքում կատարած աշխատանքները պատասխանատվորեն հանրագումարի բերելու անհրաժեշտության:

Նա ներկայացրեց ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում 2017-2018 ուստարվա գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը, սովորողների փոխադրման և ավարտման, ուստարվա ընթացքում բացակայած սովորողների փոխադրման կարգը: Տնօրենը հորդորեց լինել ուշադիր, գրանցել քննությունների և գիտելիքների ստուգման օրերը, լինել հետևողական աշակերտների ներկայությունը քննություններին և քննություններին պատրաստվելու համար կազմակերպվող կոնսուլտացիաներին ապահովելու համար:

Տնօրենը ծնողներին ներկայացրեց նաև տեղեկատվություն՝ 2-12-րդ դասարանների սովորողների բացակայությունների քանակի և բնույթի վերաբերյալ:

Մահմանված առավելագույն քանակից՝ 200ժ-ից ավել բացակայություն ունեն 11-րդ «Ա» դասարանի աշակերտներ Ավետիսյան Բորիկը և Գրիգորյան Անդրանիկը, ովքեր, անտեսելով իրենց և ծնողներին արված բազմաթիվ զգուշացումները, 200ժ-ից ավել բացակայության պատճառով կկրկնեն անցած կուրսը և կմնան նույն դասարանում:

193 դասաժամ բացակայություն ունեցող 12-րդ դասարանի աշակերտ Գրիգորյան Զահրաֆի համար սկսվել է լրացուցիչ քննությունների և ստուգողական աշխատանքների կազմակերպման գործընթացը:

Այդ քննություններն ու աշխատանքները հաջողությամբ հանձնելու դեպքում միայն Տոհրաբը ձեռք կբերի պետական ավարտական քննություններին մասնակցելու իրավունք:

Իր խոսքում 9-րդ դասարանի դասղեկ Գոհար Ղազարյանը նա կարևորեց ծնողների հետևողական աշխատանքի կարևորությունը՝ քննություններին բարեխղճորեն պատրաստվելու և լավ հանձնելու հարցում:

Մենք անում ենք ամեն ինչ, կոնսուլտացիաներ կազմակերպում ենք ամեն օր, պատրաստակամ ենք ցանկացած աշակերտի հետ կատարելու ամենօրյա անհատական աշխատանք, միայն թե նրանք կարողանան ի ցույց դնել տարիների ընթացքում ուսուցչի կատարած բարեխիղճ աշխատանքի արդյունքում ձեռք բերած գիտելիքները:

Ոլոշեցին. - Ի գիտություն ընդունել գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման ժամանակացույցն ու աշխատակարգը, լինել հետևողական աշակերտների նկատմամբ՝ քննություններին լավ պատրաստվելու և ներկայանալու համար:

## 2. Լսեցին. - Տարեվերջյան էքսկուրսիաներ կազմակերպելու հարցը:

Տնօրեն Ն. Բաբայանը ներկայացրեց, որ իրեն են դիմել բազմաթիվ ծնողներ և դասղեկներ տարեվերջյան էքսկուրսիաներ կազմակերպելու հարցով:

Տնօրենությունը երբեք դեմ չի եղել նման միջոցառումներին՝ էքսկուրսիաներին, թատրոն, կինո, մշակույթի օջախներ այցելություններին: Դրանք հետապնդում են կոնկրետ նպատակներ, նպաստում են աշակերտների ազատ շփմանը, միջանձնային նորմալ հարաբերությունների ձևավորմանը, ֆիզիկական, գեղագիտական և հայրենագիտական գիտելիքների զարգացմանը:

Խոսելով էքսկուրսիաների կարևորության մասին՝ Ն. Բաբայանը կարևորեց հատկապես նման միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը՝ էքսկուրսիաները կազմակերպել հուսալի, անվտանգ տրանսպորտային միջոցներով, անհրաժեշտության դեպքում համագործակցել տուրիստական գործակալությունների հետ: Գումարային խնդիրները պետք է կազմակերպվեն և լուծվեն բացառապես ծնողական խորհուրդների կողմից՝ առաջնորդվելով նվազագույն գումարներով անհրաժեշտ ծախսեր անելու, անապահով աշակերտներին օգնելու սկզբունքով:

Դասղեկները պետք է վերահսկեն և համակարգեն էքսկուրսիաներ կազմակերպելու աշխատանքները:

Տեղի ունեցավ քննարկում: Ելույթ ունեցած ծնողները, նշեցին էքսկուրսիաների կարևորությունը, աշակերտների սպասումները, խանդավառ վերաբերմունքը դրանց հանդեպ:

Որոշեցին.- էքսկուրսիաները կազմակերպել և իրականացնել՝ առաջնորդվելով բացառապես ծնողների և աշակերտների առաջարկություններով, համաձայնությամբ և մասնակցությամբ:

3. Լսեցին.- Գալիք ուսումնական տարվան պատրաստվելու, աշակերտական համագգեստի, կոշիկների անհրաժեշտ եմուշներ ձեռք բերելու հարցը:

Ելույթ ունեցան դասղեկներ Գոհար Ղազարյանը և Արամ Մելիքյանը: Նրանք նշեցին, որ իրենց աշակերտները ունեն նոր համագգեստ ձեռք բերելու խնդիր դրանք փոքրացել են և պետք է փոխարինվեն նորերով: Նրանք խնդրեցին տնօրենությանը կազմակերպել նոր համագգեստներ ձեռք բերելու գործընթացը:

Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Անժելա Գինոսյանը իր ելույթում նշեց, որ իրեն են դիմել տարբեր դասարանների մի շարք ծնողներ, որոնք խնդրել են կազմակերպել մասնագետների հանդիպումը և համագգեստի չափագրման գործընթացը:

Տնօրեն Նաիրա Բաբայանը նշեց, որ մեր դպրոցի համար ձեռքբերում է համագգեստ կրելը, որը կարգապահության, դպրոցականի վայել տեսքի, կեցվածքի, պահվածքի կարևոր գործոններից է: Շատ կարևոր է նաև ճիշտ, ոչ բարձրակրունկ, հարմարավետ կոշիկների ընտրությունը հատկապես աղջիկների համար: Տղաները պետք է ձեռք բերեն սպիտակ, առանց ավելորդ արտեսարների վերնաշապիկներ:

Ելույթ ունեցավ 9-րդ դասարանի ծնող Միլվա Առաքելյանը: Նա շնորհակալություն հայտնեց դպրոցի տնօրենին այդ կարևոր աշխատանքի կազմակերպման համար՝ նշելով որ ծնողները համագգեստի շնորհիվ ազատվել են անընդհատ նոր հագուստներ ձեռք բերելու ավելորդ հոգսից, ինչպես նաև աշակերտների միջև ավելորդ մրցակցությունից, որը խանգարելու է սովորելուն: Դպրոցում հաստատված կարգ ու կանոնի, աշակերտների՝ ուսման նկատմամբ ունեցած հետաքրքրությունների, ուսման մեջ ձեռք բերած հաջողությունների մեջ համագգեստը շատ կարևոր դեր ունի:

Որոշեցին.- Մինչև ուստարվա ավարտը կազմակերպել համագգեստի չափագրման, ձեռքբերման աշխատանքները՝ տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, դասղեկների հսկողությամբ և մասնակցությամբ:

4. Լսեցին.- «Վերջին զանգ»-ի կազմակերպման հարցը:


Տնօրեն Նաիրա Բաբայանը խոսեց դպրոցականների կյանքում շատ կարևոր տոնի՝ «Վերջին զանգ»-ի կազմակերպման մասին: Ոչ մի ծնողի և ուսուցչի համար նորություն չէ, որ մեր դպրոցում այդ միջոցառումը կազմակերպվել է՝ ծնողներին և աշակերտներին զերծ պահելով ավելորդ ծախսերից, առաջնային համարելով մեր շրջանավարտների համար տոնական մթնոլորտ և հիշարժան միջոցառում ապահովելը: Տնօրենը ևս մեկ

անգամ հրահանգեց և պահանջեց զերծ մնալ ցանկացած նպատակով կատարվող դրամահավաքից, եթե դա անգամ վերաբերում է ծաղիկներին: Ն. Բաբայանը հավաստիացրեց, որ հակառակ դեպքում կանի ամեն ինչ, որ պատասխանատվության կենթարկվեն բոլոր նրանք, ովքեր կփորձեն չենթարկվել դպրոցի և տնօրենության պահանջներին:

Որոշեցին.- Վերջին զանգի արարողությունը իրականացնել դպրոցում ձևավորված ավանդույթի համաձայն՝ կազմակերպելով տպավորիչ և բովանդակալից միջոցառում՝ զերծ մնալով ցանկացած նպատակով իրականացվող դրամահավաքից:

Մտղական խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝



Գ. Գալստյան



Հ. Ավագյան